

ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Բնական ռեսուրսները և բնական պայմանները ճիշտ օգտագործելու համար անհրաժեշտ է դրանք բազմակողմանիորեն ուսումնասիրել և գնահատել:

Գնահատել ընդհանրապես նշանակում է որևէ բան (իր, անձ, երևույթ) արժեքավորել, ճշտել դրա արժեքը:

Բայց արժեքավորել կարելի է այն, ինչին արդեն ծանոթ ես, ինչի քանակն արդեն հայտնի է: Ուրեմն, մինչև գնահատելը հարկավոր է գիտականորեն պարզել գնահատվող օբյեկտի քանակն ու որակը, գտնվելու տեղը և պայմանները, այսինքն՝ կազմել բնական ռեսուրսների և բնական պայմանների կադաստր:

Ուրեմն, կադաստր է կոչվում բնական օբյեկտների կամ երևույթների այն համակարգված ցուցակը, որն ընդգրկում է դրանց նկարագրությունը, քանակական ու որակական բնութագիրը:

Ներկայումս աշխարհի բոլոր երկրներում կազմվում են բնական օբյեկտների ու երևույթների տարբեր բնույթի կադաստրեր: Հատկապես լայն տարածում ունեն հողային ռեսուրսների (հողային կադաստր), օգտակար հանածոների (երկրաբանական կադաստր), ջրային ռեսուրսների (ջրային կադաստր), կլիմայական ռեսուրսների (կլիմայական կադաստր), անտառային ռեսուրսների, լանդշաֆտների,

հատուկ պահպանվող բնատարածքների ու բնության հուշարձանների կադաստրերը:

Գիտականորեն կազմված կադաստրը հնարավորություն է տալիս ճիշտ որոշելու ռեսուրսի օգտագործման ուղղությունն ու բնագավառը:

Բնական ռեսուրսների օգտագործման բնագավառները բազմազան են, որովհետև բազմազան են մարդու պահանջմունքները այդ ռեսուրսների նկատմամբ: Օրինակ՝ միևնույն անտառը հետաքրքրում է մարդուն մի դեպքում՝ որպես վառելիքայտի աղբյուր, մյուս դեպքում՝ որպես կլիմայաստեղծ գործոն, երրորդ դեպքում՝ որպես պտուղների շտեմարան կամ գեղեցկության ու թարմության աղբյուր:

Այժմ այլ օրինակ: Զբային ռեսուրսները գյուղատնտեսության մեջ օգտագործվում են ոռոգման ու ձկնաբուծության համար, էներգետիկայում՝ որպես էլեկտրաէներգիայի աղբյուր, տրանսպորտում՝ նավարկության համար, կենցաղում՝ խմելու և կոմունալ նպատակների կամ մարդկային հանգիստը կազմակերպելու համար:


Հասկանալի է, որ թվարկված տարբեր ոլորտների համար նույն բնական ռեսուրսի նշանակությունը, հետևապես և արժեքը տարբեր է:

Եվ ահա, որպեսզի որոշեն, թե որ բնական ռեսուրսն ի՞նչ նպատակով օգտագործվի, ո՞ր դեպքում դրա արդյունավետությունը կարող է ավելի բարձր լինել, կատարում են գնահատում: Հաշվի են առնվում նաև հասարակության պահանջմունքները, որոնք ժամանակի

ընթացքում կարող են փոփոխվել: Օրինակ, իր ժամանակին, երբ գնահատում էին Սևանա լճի ջրային ռեսուրսները, հաշվի էին առնում գյուղատնտեսական ոռոգման կարիքները: Ավելի ուշ, երբ հանրապետության ինդուստրացման հետ կապված աճեց էլեկտրաէներգիայի պահանջը, նույն ջրային ռեսուրսները գնահատեցին նաև էլեկտրաէներգիայի տեսակետից: Ներկայումս հաշվի են առնում այլ պահանջմունքներ ևս, հատկապես բնակչությանը խմելու ջուր ապահովելու և լճի էկոլոգիական հավասարակշռությունը պահպանելու անհրաժեշտությունը:

Ուրեմն գնահատման ժամանակ անհրաժեշտորեն գործ ենք ունենում գնահատման ոչ միայն օբյեկտի՝ ռեսուրսի տեսակի այլև սուբյեկտի, օգտագործողի հետ: Դրանք են՝ գյուղատնտեսությունը, շրնարարությունը, էներգետիկան, քաղաքային տնտեսությունը, ռեկրեացիան, բնապահպանությունը: Ջրային ռեսուրսի դեպքում գնահատման սուբյեկտներ են գյուղատնտեսական ոռոգումը, էլեկտրաէներգետիկան, ջրային տրանսպորտը, կենցաղային արդյունաբերական ջրամատակարարումը, ռեկրեացիան, ձկնաբուծությունը:

Գնահատմանը մասնակցող տարրերը



Գնահատման ամեն մի սուբյեկտի համար միևնույն օբյեկտը տարբեր արժեք է ներկայացնում: Այդ պատճառով էլ տարբեր են լինում գնահատման չափանիշները և միավորները:

Միտքը պարզաբանենք օրինակներով: Միևնույն ծառը որպես վառելափայտ կամ շինափայտ օգտագործելու դեպքում չափում ենք փայտանյութի պաշարը, որի չափման միավորը խմ-ն է: Գյուղատնտեսության մեջ օգտագործելիս հաշվում ենք բերքատվությունը մեկ տարում քանի **կգ** պտուղ է տալիս: Եթե ծառը մեզ հետաքրքրում է որպես կլիմայաստեղծ գործոն, ապա հաշվում ենք, թե ինչքան թթվածին կարող է արտադրել (տարբեր ծառատեսակների կարողությունը տարբեր է), ինչպիսին է սաղարթի խտությունը ստվեր զցելու համար և այլ հատկանիշներ, որոնք չափման տարբեր միավորներով են գնահատվում: Բնական ռեսուրսների տնտեսական գնահատումը կատարվում է դրամական (փողային) միավորներում գնահատվում է բնական ռեսուրսի տնտեսական օգտակարությունը, այսինքն՝ այն տնտեսական նշանակությունը, որ այդ բնական ռեսուրսն ունի մարդկանց տարաբնույթ պահանջմունքների բավարարման համար:

Հաշվարկվում է, թե բնական ռեսուրսի տվյալ հատկանիշի օգտագործումը ինչպես կազդի աշխատանքի արտադրողականության վրա և ինչքանով կմեծացնի կամ կփոքրացնի արտադրանքի ինքնարժեքը:

Բնական ռեսուրսների սոցիալական գնահատման նպատակն է պարզել ռեսուրսի սոցիալական արժեքը այսինքն, թե ինչպես է այն ազդում մարդկանց աշխատանքի, կենցաղի ու հանգստի կազմակերպման վրա, նպաստում է անձի ներդաշնակ զարգացմանը, թե՞ արգելակում: Ակնհայտ է, որ բոլորովին տարբեր սոցիալական արժեք ունեն, օրինակ, արևադարձային գոտու ծովափնյա շրջանների, տունդրայի ու սավաննաների, դաշտավայրերի ու լեռնային շրջանների բնական ռեսուրսներն ու պայմանները:

Բնական ռեսուրսների սոցիալական արժեքը փոդային միավորներով արտահայտել հնարավոր չէ: Տարբեր ռեսուրսներ համեմատելով միմյանց հետ՝ որոշում են, թե ո՞րն է ավելի լավ կամ ավելի վատ և որի՞ն նախապատվությունը տալ:

Բնական ռեսուրսների էկոլոգիական գնահատման ժամանակ գլխավոր ուշադրությունը դարձվում է օբյեկտի միջավայրաստեղծ նշանակությանը: Փորձում են պարզել, թե բնության տվյալ տարրը կամ երևույթը, օրինակ, լճակը, անտառային պուրակը կամ լեռնալանջի քայքայումը, հողի էրոզիան ինչ ազդեցություն են ունենում շրջակա միջավայրի վրա, ինչպես են փոխում դրա որակը:

Բնական ռեսուրսները երկրագնդի վրա բաշխված են խիստ անհավասարաչափ: Կան երկրներ ու տարածաշրջաններ, որոնք աչքի են ընկնում բնական ռեսուրսների մեծ բազմազանությամբ ու հարստությամբ: Այդպիսիք են, օրինակ, Ուրալը, Սիբիրը, ԱՄՆ-ի շատ շրջաններ, Արևելյան Ավստրալիան, Հարավային Աֆրիկան: Դրան հակառակ, քիչ չեն այնպիսիք, որոնք զուրկ են տնտեսության բազմակողմանի զարգացման համար անհրաժեշտ բնական ռեսուրսներով:

Մեծ են նաև բնական պայմանների աշխարհագրական տարբերությունների մարդկանց բնակության ու տնտեսական գործունեության համար աննպաստ, հավերժական սառույցներից ու տոթակեզ անապատներից մինչև բարեբեր անտառատափաստանները և բազմահարուստ ու բարեշնորհ ծովափնյա շրջանները:

Դրա պատճառով խիստ տարբեր է երկրագնդի տարբեր մասերի ու երկրների ռեսուրսաապահովվածությունը: Ռեսուրսաապահովվածությունը մի ցուցանիշ է, որով որոշում են, թե որևէ երկիր, շրջան, ձեռնարկություն ինչպես ապահովել բնական ռեսուրսների տարբեր տեսակներով օրինակ, ոռոգման ջրով, անտառափայտով նավթի ու գազի հանքատեսակների պարշարներով: